## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՑԱՏՐԱԳԻՐ


1. Ընդհանուր դրույթներ
2. Շինարարության պայմանները
3. Շինարարոփության    կազմակերպատեխնոլոգիական սխեման
4. Շինարարության ժամկետները
5. Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը
6. Հիմնական շինարարական աշխատանքների ծավալները և ռեսուրսների պահանջարկը
7. Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը
8. Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ
9. Ժամանակավոր վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների պահանջվող մակերեսների հաշվարկ

### ԳԾԱԳՐԵՐ

ՇԿ-1  Բացատրագիր

ՇԿ-2  Բացատրագիր շարունակություն

ՇԿ-3  ՇԳՀ՝ կաղապարամածային  աշխատանքներ / I փուլ/,

ՇԿ-4  ՇԳՀ՝ ամրանային  աշխատանքների ավարտ / I փուլ/,

ՇԿ-5  ՇԳՀ՝ տանիքի սալի բետոնացման ավարտ,

ՇԿ-6  ՇԳՀ՝ ամվտանգության ցանցի մոնտաժում,

ՇԿ-7 Աշխատանքների կատարման ժամանակացույց:


### ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Ընդաիուր դրույթներ

«Շինարարության կազմակերպում» բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀ ՇՆ 3.01.01-09 և ընդգրկում է

- բացատրագիր,
- աշխատանքների կատարման ժամանակացույց,
- շինարարական գլխավոր հատակագծեր:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀ ՇՆ 3.01.01-09 «Շինարարության կազմակերպում »,
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»,
- ՀՀՇՆ 13-03-2022 « Կրող և պատող կոնստրուկցիաներ»,
- ՄՆԻՊ 3.02.01-87 «Հողային կառույցներ, հիմնատակեր և հիմքեր »,
- ԳՈՍՏ 24258-88 «Փայտամածային միջոցնոր: Ընդհանուր տեխնիկական պահանջներ »,
- ԳՈՍՏ 27321-87 «Կցովի կանգնակային փայտամածեր շինմոնտաժային աշխատանքների կատարման համար:Տեխնիկական պայմաններ»,

**2. Շինարարության պայմանները**

Վերակառուցվող ուղղաթիռային հարթակը գտնվում է Վայոց Ձորի մարզի գործող ԲԿ-ի ընդունարանի մասնաշենքի տանիքի վրա: Նախագծով նախատեսվում է մեծացնել գոյություն ունեցող հարթակը 0,7 մ բարձակային սալի չափով (հարթակի շառավիղը մեծացնելով 9մ –ից 9,7 մ) և ավելացնել անվտանգության ցանցային գոտի:

Գոյություն ունեցող հարթակի ծածկույթը ռետինե մանրուքից է, որը քանդվելու է հարթեցնող շերտի հետ միասին: Մեծացվող հարթակի ծածկույթը նույնպես ռետինե մանրուքից է լինելու:

Վերակառուցման պայմանները բարդ են՝ պայմանավորված գործող ԲԿ-ով:

Մոնտաժային աշխատանքներում զբաղված բանվորները պետք է կիրառեն պաշտպանական գոտիներ՝ ամրակցված կայուն կոնստրուկցիայի: Գործիքների պատահական անկումը կանխելու համար առաջարկվում է որսող ցանցի տեղադրում մուտքային մասում և հետիոտնային անցումի տեղադրում Ա առանցքով:

Կռունկի տեղադրման տեղամասը ցանկապատվում է ազդանշանային ժապավենով, տեղադրվում են նախազգուշացնող և արգելող անվտանգության նշաններ:

Շինարարական աղբը հավաքվում է աղբամանում և հեռացվում շինհրապարակից նախապես սահմանված վայր:

**3. Շինարարության կազմակերպատեխնոլոգիական սխեման**

**3.1 Նախապատրաստական աշխատանքներ**

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- տարածքի ժամանակավոր ազդանշանային ցանկապատում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնտեսության կազմակերպում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Որպես շարժական կոմպրեսոր (օդաճնշումային գործիքների սպասարկման համար) առաջարկվում է Comp Air C 76 մոդելը:

**3.2. Վերակառուցման աշխատանքներ**

Վերակառուցման աշխատանքներից առաջ իրականացվում է գոյություն ունեցող հարթակի ծածկույթի և հարթեցնող շերտի քանդում, բազրիկի ապամոնտաժում:

Հարթակի սալում նախագծով սահմանված տեղերում գայլիկոնվում են անցքեր, որոնց մեջ սոսնձվում են խարիխներ:

Աշխատանքներն իրականացվում են փուլային եղանակով: Մասնավորապես կաղապարամածի տեղադրման, ամրանավորման և բետոնացման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է 4 սեկտորային գործամաս: Փայտե կաղապարամածն ունի Գ-ձև հատվածք: Այն ամրակապելու համար կիրառվում է ամրանային կարճաձողերի, դրանց եռակցվող անկյունակների և վերջիններիս վրա տեղադրվող մետաղական խողովակների համակարգ, որը պատկերված է Գծագիր 1-ում: Կաղապարամածային վահաններն ամրացվում են այդ համակարգին մետաղալարերի միջոցով: Աշխատանքներն իրականացվում են հարթակից և կախովի ճոճից, որը կարող է լինել ինչպես գույքային, այնպես էլ պատրաստովի ըստ պահանջվող չափսերի: Կաղապարամածը տեղադրելուց հետո կատարվում է շառավղային և հորիզոնական ամրանների տեղադրում գործամասում ըստ Գծագիր 2-ի:

Առաջին գործամասում բետոնացման աշխատանքներն իրականացնելուց հետո կատարվում են երկրորդ գործամասի կաղապարամածային և ամրանավորման, ապա բետոնացման աշխատանքներ:

Անվտանգության ցանցային գոտու իրականացումը կատարվում է բետոնացման աշխատանքների ավարտից հետո, տեղաշարժվող աշխատանքային տախտակամածի վրայից: Այս փուլում ևս պարտադիր է բանվորների պաշտպանական գոտիների ամրակապումը կայուն կոնստրուկցիայից:

Ցեմենտավազե հարթեցնող շերտը որոշակի թեքություն է տալիս հարթակին: Հարթակի ծածկույթը ռետինե մանրուքից է՝ պոլիուրետանային սոսնձի հենքով:

Որպես հիմնական ամբարձիչ մեխանիզմ առաջարկվում է **XCMG QY25K-II K** ավտոկռունկը:



12360*2500*3800մ

Ավտոկռունկ XCMG QY25K-II K

**XCMG QY25K-II** կռունկի տեխնիկակամ բնութագիրը

| | |
|---|---|
| Առավելագույն բեռնամբարձություն/սլաքի թռիչք | 25 տ / 3 մ |
| Հիմնական սլաքի երկարությունը | 10.5 մ |
| Սլաքի երկարությունը բացված վիճակում | 39,5 մ |
| Սլաքի երկարությունը սագիկով | 47,8մ |
| Անիվային բանաձև | 8 x 8 x 8 |

**4. Շինարարության ժամկետները**

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Շենքի վերակառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **3 ամիս** կամ **90 օրացուցային օր**:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է **7 մարդ**:

Գումարային աշխատատարությունը կազմում է **197 մարդ-օր**:

**5.Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում, իսկ գործիքների, հարմարանքների, հանդերձանքի անվանացանկն աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքեմնաների և մեխանիզմների անվանացանկ

| NN | Անվանում | Մակնիշ | Քանակ |
|---|---|---|---|
| 1 | Ավտոմոբիլային կտունկ | **XCMG QY25K-II** | 1 |
| 2 | Ավտովերիան | **AT-22/7 CTE B-LIFT 230 HY, IVECO Daily** | 1 |
| 3 | Բետոնամղիչ | 777 DO 01 Mersedes Benz Axor, | 1 |
| 4 | Թրթռիչ մակերեսային | ИВ-91А | 2 |
| 5 | Փոխարկիչ թրթռիչների համար | ИВ-4 | 1 |
| 6 | Եռակցման սարքեր | WARRIOR 500i CC/CV | 3 |
| 7 | Փոքր մեքենայացման միջոցներ | կոմպլեկտ | 1 |
| 8 | Շարժական կոմպրեսոր | Comp air C 76 | |
| 9 | Ավտոբետոնախառնիչ | Kamaz 58149 z | ըստ հաշվարկի |

Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ


0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am


Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

Բացատրագիր

| | | | |
|---|---|---|---|
| Գծագիր | ՇԿ - 01 | Էլ.ֆայլ | PC 100.01 |
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳճ | | Ռ. Մանյան |
| Բաժ. ղեկ. | | Գ□Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |
| էջ | 1 |

ՖՈՐՄԱՏ

**Աղյուսակ 2**

**Շինարարական գործիքների, հարմարանքների, հանդերձանքի անվանացանկ**

| NN | Անվանում | Մակնիշ | Քանակ |
|---|---|---|---|
| 1 | Գույքային կամ պատրաստովի ճոճ | | Ըստ պահանջի |
| 2 | Տանիքային ամբարձիչ | | 1 |
| 3 | Հատիչներ (հավաքածու) | | 1 |
| 4 | Բանալիներ (հավաքածու) | | 1 |
| 5 | Մուրճեր (հավաքածու) | | 2 |
| 6 | Ակցան | | 2 |
| 7 | Հարթաշուրթ դիէլեկտիկ. բռնիչներով | | 2 |
| 8 | Սաղավարտ | | 7 |
| 9 | Երկարաճիտ կիրզե կոշիկներ | | 5 |
| 10 | Ապահովիչ գոտի | ГОСТ Р 50849-96 | 3 |
| 11 | Կախաճոպան | | 3 |
| 12 | Ձեռնոցներ | Ըստ պահանջի | |
| 13 | Ռեսպիրատոր | Лепесток | 4 |
| 14 | Պաշտպանիչ ակնոցնր | | 5 |
| 15 | Աղբակուտակիչ | | 1 |

**6. Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները**

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3**

**Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ**

| NN | Աշխատանքների անվանումները | Չափման միավ. | Ծավալը |
|---|---|---|---|
| 1. | Ամրանավորման աշխատանքներ | տ | 5,1 |
| 2. | 80x60x4 մմ քառակուսի հատվածքով պողպատե խողովակների տեղադրում | տ | 2,63 |
| 3. | Սալում անցքերի զայլիկոնում և խարիսխների տեղադրում | հատ | 212 |
| 4. | Բետոնային աշխատանքներ | մ³ | 29,6 |
| 5. | Ցեմենտավազային շերտի իրականացում | մ² | 296,0 |
| 6. | Ռետինե մանրուքից հարթակի ծածկույթի պատրաստում | մ² | 296,0 |
| 7. | Հակակոռոզիոն ներկման աշխատանքներ | տ | 5,1 |

Շինարարական աղբը կուտակվում է աղբամաններում և պարբերաբար հեռացվում:

**Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը**

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

**Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ**

1 Էլեկտրաէներգիա Pհաշվ, ԿՎտ 65,0

2 Ջուր մ3/օր 1,5

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10 լ/վրկ:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

ՀԱՇՎԱՐԿ

*անհրաժեշտ էլեկտրական հզորության ,կՎտ*

1. Եռակցման սարքեր /3 հատ 27,0

2. Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ 25,0

/հատիչներ, դուրեր,սղոցներ և այլն, 3 կոմպլեկտ

3 Էլեկտրաթրթռիչներ 2 հատ 20,0

5. Շենքի լուսավորում և կենցաղ 10

---------------------------------------------------- -----------

P տեղ.=82 կՎտ

P հաշվ.= Pտեղ.* Kպահանջ.=82 կՎտ * 0,8=65 կՎտ :

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

1.Ինժեներատռեխնիկական անձնակազմի կենցաղային կարիքներ մարդ*0,016մ³/մարդ 2 x 0,016 մ³= 0.032 մ³

2.Բանվորների կենցաղային կարիքներ 7 մարդ*0,025մ³/մարդ 0,175 մ³

3. Բետոնի ջրման 29մ³*0,0314մ³/մ³ 0,899 մ³

6. Շինհրապարակի մաքրման 100մ²*0,004մ³/մ² 0,4 մ³

Ընդամենը՝ 1,5 մ³

Զույգ հակահրդեհային հիդրանտներից ջրի ծախսը՝ 2*5=10 լ/վրկ

**ւմոնտաժային աշխատանքների որակի հսկումը**

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվողդ միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների,

աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը: Շինարարական կառուցվածքների իրականացման որակի հսկումն անհրաժեշտ է իրականացնել ըստ ՀՀ ՇՆ 3.01.01-09 «Շինարարության կազմակերպում » և ՀՀՇՆ 13-03-2022 « Կրող և պատող կոնստրուկցիաներ»:

**8. Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ**

8.1. Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները, որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:

8.2. Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:

8.3. Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ , առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

8.4. Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով ՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրերի:

8.5. Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:

8.6. Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը՝ լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը , պարապ ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:

8.7. Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:

8.8. Բեռնակալիչ հարմարանքները և տարան ( վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:

8.9. Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ՝ 200 մ2 մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:

8.11. Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում

8□12 Անհրաժեշտ է իրականացնել փոշեմարման միջոցառումներ ՝անհրաժեշտության դեպքում ճակատային պաշտպանիչ թաղանթների կիրառմամբ և բեռնատարների թափքը պաստառով ծածկելու միջոցով:

**9. Ժամանակավոր վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների պահանջվող մակերեսների հաշվարկ**

Աշխատանքների կատարման ժամանակացույցում բանվորների առավելագույն քանակը կազմել է 7 մարդ:

Համապատասխան նորմատիվային հարաբերակցության ԻՏԱ և ծառայողների թիվը կկազմի 2 մարդ :

Ըստ ստացված թվաքանակի

1.Գրասենյակի պահանջվող մակերեսը՝ F գր = 2*3 =6 մ²

2.Հանդերձարանի պահանջվող մակերեսը՝

F հանդ=5 x 0,3 =1,5 մ² (5=7*0.6)

3.Ցնցուղարանի պահանջվող մակերեսը՝

1 ցնցուղ՝12 մարդուն, այսպիսով 0.4*7/12 =1 ցնցուղ:

4. Լվացարանի պահանջվող մակերեսը՝

1 ծորակ 15 մարդու համար, այսպիսով 5/15 =1 ծորակ:

5. Սննդի ընդունման կետի պահանջվող մակերեսը ՝4 մարդուն 1 նստատեղ

5/4 =1.25 1.25*4=5 մ²:

6. Տաքացման սենյակի մակերեսը

5 x / 0.1+0.2/ =1,5 մ ² :

7.Զուգարան՝ նորմաներով 30 մարդուն 1 անցք 5/30=1:

Պահանջվող մակերեսները կարելի է նախատեսել ուղղաթիռային հարթակի վրա առկա շինության ներսում և ԲԿ-ում:

Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

Բացատրագիր շարունակություն

| Գծագիր | ՇԿ - 02 | Էլ.ֆայլ | PC 100.02 |
|---|---|---|---|
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳԵ | | Ռ. Մամյան |
| Բաժ. դեկ. | | Գ,Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |

| էջ | 2 | ՖՈՐՄԱՏ |
|---|---|---|









Հանգույց




Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ
ուղղաթիռային հարթակի
վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

ՇԳՀ՝ կաղապարամածային
աշխատանքներ /I փուլ/

| | | | |
|---|---|---|---|
| Գծագիր | ՇԿ - 03 | էլ.ֆայլ | PC 100.03 |
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳճ | | Ռ. Մամյան |
| Բաժ. ղեկ. | | Գ,Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |
| | | |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |
| էջ | 3 |

ՖՈՐՄԱՏ




Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ


0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am


Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

ՇԳՀ՝ ամրանային աշխատանքների ավարտ /I փուլ/

| | | | |
|---|---|---|---|
| Գծագիր | ՇԿ - 04 | էլ.ֆայլ | PC 100.04 |
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳճ | | Ռ. Մամյան |
| Բաժ. ղեկ. | | Գ,Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |
| | | |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |

| | | | |
|---|---|---|---|
| էջ | 3 | ՖՈՐՄԱՏ | |




Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

ՇԳՀ՝ տանիքի սալի բետոնացման ավարտ

| | | | |
|---|---|---|---|
| Գծագիր | ՇԿ - 05 | Էլ.ֆայլ | PC 100.05 |
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳՃ | | Ռ. Մանյան |
| Բաժ. ղեկ. | | Գ,Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |
| | | |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |

| | | |
|---|---|---|
| էջ | 6 | ՖՈՐՄԱՏ |




Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

ՇԳՀ՝ անվտանգության ցանցի մոնտաժում

| | | | |
|---|---|---|---|
| Գծագիր | ՇԿ - 06 | Էլ.ֆայլ | PC 100.06 |
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳճ | | Ռ. Մամյան |
| Բաժ. ղեկ. | | Գ,Սմբատյան |
| Նախագծեց | | Ա□Ղուլյան |
| Ստուգեց | | Հ□Սողոմոնյան |
| | | |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |
| էջ | 6 |

ՖՈՐՄԱՏ

# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲԿ-Ի ՈՒՂՂԱԹԻՌԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ՀՀ | Խումբը | Աշխատանքների անվանումները | Չ,մ. | Ծավալը | Հիմնավորումը | Աշխատատարությունը: Նորմա, մ-ժ | Աշխատատարությունը: Ընդհանուր, մ-հերթ | Բանվորների թիվը | Տևողությունը,օր | I ՏԱՐԻ (I ամիս, II ամիս, III ամիս) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Ա | Նախապատրաստական աշխատանքնր | | | | | 24 | 4 | 6 | 4 |
| | | Տարածքի ժամանակավոր ազդանշանային ցանկապատում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում,բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ | | | | | | | | |
| | Բ | Քանդման աշխատանքներ | | | | | | | | |
| 2 | | Տանիքի ռետինե մանրուքից ծածկույթի քանդում | $մ^2$ | 284 | 46-121, 31-14 | 0.12 | 4.26 | 2 | 4 | 2 |
| 3 | | 40 սմ հաստությամբ ց/ավազային շերտի քանդում | $մ^2$ | 284 | 46-119 46-120 | 0.32 | 11.4665 | 3 | 4 | 3 |
| 4 | | Բազրիկների ապամոնտաժում | գծմ | 59.30 | Ռ9-26Վ | 0.357 | 2.65 | 2 | 4 | 2 |
| | Գ | Վերակառուցման աշխատանքներ | | | | | | | | |
| 5 | | Գոյություն ունեցող ե/բ սալում Φ14 մմ անցքերի զայլիկոնում 150 մմ խորությամբ ամրանային խարիսխների համար,խարիսխների տեղադրում | հատ | 212.0 | 46-156 42-1 * | 0.82 | 21.73 | 4 | 6 | 4 |
| 6 | | 80x60*4 մմ ուղղանկյուն խողովակներից մետաղական հեծանների տեղադրում, Φ12 մմ A500c ամրանից L=1500 մմ երկարությամբ 106 հատ հորիզոնական ամրանների, բարձակային մասի շառավղային և շրջանագծային ամրանների,միջին մասի ամրանների տեղադրում,ձգանների և անվտանգության ցանցերի տեղադրում | տ | 7.74 | 9-94 | 13.5 | 13.06 | 5 | 66 | 5 5 5 5 5 |
| 7 | | Մետաղական տարրերի հակակոռոզիոն ներկում | տ | 5.10 | 34-163 պայմ. | 13.28 | 8.47 | 2 | 10 | 2 2 2 2 2 |
| 8 | | Բարձակային սալի և ուղղաթիռի հարթակի բետոնացում B 20 դասի բետոնով 10 սմ հաստությամբ | $մ^3$ | 29.6 | 46-5 | 19.8 | 73.26 | 4 | 20 | 4 4 4 |
| 9 | | Տանիքի ց/ա հարթեցնող շերտի իրականացում ՝ թեքություն ապահովելով ,100-25 մմ հաստությամբ | $մ^2$ | 292.0 | 12-299 12-300 q=50 | 0.178 | 6.50 | 3 | 6 | 3 |
| 10 | | Տանիքի ռետինե մանրուքից ծածկույթի իրականացում պոլիուրետանային սոսնձի հենքով | $մ^2$ | 292.0 | 11-205 | 0.76 | 27.74 | 2 | 14 | 2 |
| 11 | | Ջրթափի իրականացում կեռաբևեռի տեղադրմամբ | $մ^2$ | 36.6 | 12-280 8-5 | 0.83 | 3.80 | 2 | 4 | 2 |
| 12 | | Քամու ուղեցուցիչի տեղադրում | հատ | 1.0 | | | | 2 | 2 | 2 |
| 13 | | Բարեկարգում | | | | | | 3 | 4 | 3 |
| | | **Ընդամենը** | | | | | 196.924 | | 150 | |

**Բանվորների առավելագույն քանակը 7 մարդ:**

Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

«Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծի անվանումը

«ՀՀ Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ ուղղաթիռային հարթակի վերակառուցման նախագիծ

| Փուլ | Մաս | Ալբոմ | Գիրք | Հատոր |
|---|---|---|---|---|
| ԱՆ | ՇԿ | 1 | - | - |

Գծագրի անվանում

Աշխատանքների կատարման ժամանակացույց

| Գծագիր | ՇԿ - 07 | Էլ.ֆայլ | PC 100.07 |
|---|---|---|---|
| Մասշտաբ | | | |

Կատարող բաժնի անվանումը

| | | |
|---|---|---|
| ՆԳԵ | | Ռ. Մամյան |
| Բաժ. ղեկ. | | Գ.Սմբատյան |
| Նախագծեց | | Ա Ղուլյան |
| Ստուգեց | | Հ Սողոմոնյան |

Պատվեր ՆՊ 001 - ՌՄ25

| ամսաթիվ | արխիվ. համար | գույքահամար |
|---|---|---|
| | | |

Փոփոխություններ

| | |
|---|---|
| 3 | |
| 2 | |
| 1 | |
| 0 | |
| էջ | 7 |

ՖՈՐՄԱՏ